

Հագարամյակի մարտահրավերների համաձայնագիրը Հայաստանի հետ Համառոտ ակնարկ

I. Ներածություն

Լինելով փոքր, դեպի ծով ելք չունեցող պետություն Կովկաս տարածաշրջանում, Հայաստանը լուրջ ջանքեր է գործադրում՝ վերականգնվելու **1990**-ականների սկզբներին Խորհրդային Միության փլուզման հետևանքով տնտեսության ծանր անկումից: **1994** թվականին Հայաստանը որդեգրեց կայունացման և բարեփոխումների համապարփակ ծրագիր, որի արդյունքում երկիրը վեր ածվեց ազատական շուկայական տնտեսության և մտավ անընդհատ աճի շրջան, որի ընթացքում ՀՆԱ-ի տարեկան աճի միջին տեմպը մեկ տասնամյակի ընթացքում կազմեց **8%**: Այսօր, **3.2** միլիոն բնակչությամբ Հայաստանում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, ըստ հաշվարկների, կազմում է **1,100** ԱՄՆ դոլար: Տնտեսական աճից մինչ այժմ անհամամասնորեն շատ են օգտվել մայրաքաղաք Երևանի բնակիչները, և գյուղական աղքատության ցուցանիշը մնում է 30%-ից բարձր: Ավելի քան մեկ միլիոն հայեր, կամ բնակչության մոտ 35%-ը, ապրում են գյուղական վայրերում և կախված են կիսով չափ ինքնաբավ գյուղատնտեսական գործունեությունից: Այս ֆերմերները շահագործում են փոքր, մասնատված հողակտորներ, և նրանց գործունեությունը սահմանափակվում է այնպիսի գործոնների պատճառով, ինչպիսիք են անբավարար ենթակառուցվածքները և թերզարգացած գյուղատնտեսական տնտեսությունը:

Հայաստանի հետ կնքված՝ 235 միլիոն ԱՄՆ դոլար գումարով համաձայնագիրը կենտրոնացած է մեկ նպատակի ուղղությամբ, այն է՝ գյուղատնտեսական ոլորտի տնտեսական կատարողականի կայուն բարելավման միջոցով գյուղական աղքատության կրճատում: Համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող ծրագիրը նպաստելու է այս նպատակի իրագործմանը՝ գյուղական ճանապարհների և ոռոգման ենթակառուցվածքի մեջ ռազմավարական ներդրումներ կատարելու, ինչպես նաև ջրամատակարարող կազմակերպություններին, ֆերմերներին և առևտրային գյուղիզնեսի սուբյեկտներին տեխնիկական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու հնգամյա ծրագրի միջոցով (այսուհետ՝ «Ծրագիր»):

II. Ընդհանուր տեղեկություններ ծրագրի և բյուջեի մասին

Հայաստանի գյուղատնտեսական ոլորտի տնտեսական կատարողականը վերափոխելու և գյուղական աղքատությունը կրճատելու նպատակով իրականացվելու է երկու ծրագիր՝ Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր և Ոռոգվող գյուղատնտեսության ծրագիր:

Ա. Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր (67 միլիոն ԱՄՆ դոլար). այս ծրագրի շրջանակներում վերականգնվելու են մինչև **943** կիլոմետր երկարությամբ

գյուղական ճանապարհներ, որը կառավարության կողմից առաջարկվող՝ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի 35%-ն է: Պատրաստ լինելուց հետո Կենսական նշանակության ճանապարհային ցանցը կապահովի, որպեսզի յուրաքանչյուր գյուղական համայնք ելքի հնարավորություն ունենա դեպի շուկաներ, սոցիալական ծառայություններ և հիմնական/միջպետական ճանապարհային ցանց: Բացի այդ, ֆինանսավորում կտրամադրվի Հայաստանի ճանապարհային տնօրինությանը, որպեսզի անցկացվի պահպանության ընթացիկ պայմանագրերի տեխնիկական աուդիտ և մշակվի ճանապարհների պահպանության ռազմավարական պլան:

Բ. Ոռոգվող գյուղատնտեսության ծրագիր (146 միլիոն ԱՄՆ դոլար). այս ծրագիրը կազմված է երկու մասից.

- **Ենթակառուցվածքի** բաղադրիչ (113 միլիոն ԱՄՆ դոլար), որի նպատակն է վերականգնել ոռոգման ենթակառուցվածքի մինչև 21 հատվածներ երկրի ողջ տարածքով մեկ, ընդլայնել ոռոգվող ընդհանուր հողատարածքը, և բարելավել ջրի արդյունահանման և ֆերմերներին ջրի մատակարարման ընդհանուր արդյունավետությունը:
- **«Ջուր դեպի շուկաներ»** բաղադրիչ (33 միլիոն ԱՄՆ դոլար), որի նպատակն է կատարելագործել ջրամատակարարման տեղական ու ազգային կազմակերպությունների կառավարչական կարողությունները և օժանդակել մոտ 60,000 ֆերմերների անցմանը դեպի բարձրարժեք գյուղատնտեսական համակարգեր՝ տրամադրելով տեխնիկական աջակցություն և գյուղական վարկավորում: Այս կերպ հնարավոր կլինի ապահովել ոռոգման բարելավված ենթակառուցվածքի կայուն կառավարումը և ապահովել ֆերմերային գործունեության շահութաբերությունը:

Հետևյալ աղյուսակում ըստ տարիների և ոլորտների ներկայացված է ՀՄՀ-ի հանգանակությունը Ծրագրին:

Նկարագրություն	Ժամկետ					ԸՆԴԱՄԵՆԸ
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի	
	(մլն ԱՄՆ դոլար)	(մլն ԱՄՆ դոլար)	(մլն ԱՄՆ դոլար)	(մլն ԱՄՆ դոլար)	(մլն ԱՄՆ դոլար)	
Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր	0.89	18.32	23.32	14.16	10.40	67.10
Ոռոգվող գյուղատնտեսության ծրագիր	8.24	37.24	41.23	34.20	24.77	145.67
Ծրագրի կառավարում և աուդիտներ	2.06	4.12	4.69	3.81	3.11	17.79
Մոնիտորինգ և գնահատում	1.44	0.92	0.95	0.97	0.81	5.08

ԸՆԴԱՄԵՆԸ ¹	12.63	60.61	70.20	53.13	39.09	235.65
-----------------------	-------	-------	-------	-------	-------	--------

III. Ազդեցությունը

Ծրագիրն ուղղակիորեն ազդելու է մոտ **750,000** հոգու վրա, որը գյուղաբնակների **75%**-ն է, և ակնկալվում է, որ ծրագրի շնորհիվ նրանց տարեկան եկամուտները **2010թ.** կբարձրացվեն մոտ **36** միլիոն ԱՄՆ դոլարով, իսկ **2015թ.**¹ ավելի քան **113** միլիոն դոլարով: Սա համահունչ է նույն ժամանակահատվածներում գյուղատնտեսության ոլորտում ստեղծված հավելյալ արժեքի 4% և 11% ցուցանիշներին: Կանխատեսվում է, որ **2013թ.** դրությամբ գյուղական աղքատության ցուցանիշը Ծրագրի շնորհիվ կնվազի **5** տոկոսային կետով: Ակնկալվում է, որ գյուղատնտեսական ոլորտի վերափոխման շարունակման միջոցով կկրճատվի նաև գյուղական աղքատությունը:

Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի շնորհիվ գյուղական համայնքների, այդ թվում՝ ֆերմերների և վերամշակողների տրանսպորտային ծախսերը կկրճատվեն տարեկան մոտ **20** միլիոն դոլարով՝ սկսած ծրագրի էական օգուտները կյանքի կոչելու պահին հաջորդող հինգերորդ տարվանից: Այս ծրագրի հիմնական շահառուներն են լինելու մոտ **360,000** գյուղաբնակ հայեր, ովքեր բնակվում են ՀՄԿ-ի միջոցներով վերականգնվելիք ճանապարհային ցանցին կապակցվելիք **265** համայնքներում:

Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրից կօտվեն մոտ 250,000 ֆերմերային տնային տնտեսություններ, որոնց 34%-ը գլխավորվում են կանանց կողմից: Ենթակառուցվածքի բարելավման բաղադրիչի շնորհիվ ոռոգումը հասանելի կդառնա լրացուցիչ **46,000** հեկտար (**114,000** ակր) նոր և վերականգնված հողատեսքերի համար, որի արդյունքում ոռոգվող արտադրության մեջ օգտագործվող ընդհանուր հողատարածքը կընդարձակվի ավելի քան **40%**-ով: «Ջուր դեպի շուկաներ» բաղադրիչի շրջանակներում ցուցաբերվելիք տեխնիկական օժանդակությունը թույլ կտա մասնակից ավելի քան **60,000** ֆերմերների ավելացնել իրենց միջին զուտ եկամուտը մոտ **25%**-ով՝ որդեգրելով ֆերմայում ջրի կառավարման կատարելագործված մեթոդներ և զբաղվելով ավելի բարձրարժեք գյուղատնտեսությամբ: «Ջուր դեպի շուկաներ» բաղադրիչը նաև կնպաստի փոքր և միջին գյուղատնտեսությունների զարգացմանը՝ ընդլայնելով գյուղական վարկավորման հասանելիությունը և վերապատրաստում իրականացնելով հետբերքահավաքային մշակման ու շուկայավարման թեմաներով:

IV. Ծրագրի կառավարում

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ստեղծելու է առանձին իրավաբանական անձ՝ «ՀՄՀ-Հայաստան»-ը, որը կառավարելու և վերահսկելու է Ծրագիրը: ՀՄՀ-Հայաստանը կազմված կլինի Կառավարման խորհրդից և Կառավարման

¹ Կլորացման պատճառով հնարավոր է, որ ընդհանուր գումարները հավասար չլինեն հանրագումարին:

գրասենյակից: Կառավարման խորհուրդը, որը պատասխանատու կլինի ռազմավարական ու կառավարչական կարևորագույն որոշումներ կայացնելու համար, կնախագահվի Վարչապետի կողմից, և կազմված կլինի կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, որոնք քվեարկելու իրավունք ունեցող անդամներ կլինեն: Կառավարման գրասենյակի կազմում կլինեն տեխնիկական փորձագետներ: Կառավարման գրասենյակը պատասխանատու կլինի Ծրագրի ամենօրյա կառավարման համար:

Ծրագիրը կիրագործվի Կառավարման գրասենյակին հաշվետու երեք առանձին կազմակերպությունների կողմից: Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիրը կիրականացվի Հայաստանի ճանապարհային տնօրինության կողմից, իսկ Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրի Ոռոգման բաղադրիչը` Համաշխարհային բանկի կողմից ստեղծված Ոռոգման ծրագրի իրականացման գրասենյակի կողմից: Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրի «Ջուր դեպի շուկաներ» բաղադրիչի իրականացումը ենթակապալով կհանձնվի որևէ մասնավոր ֆիրմայի կամ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպության:

ՀՄՀ-Հայաստանին ֆինանսական գործակալի ծառայություններ, ներառյալ միջոցների վերահսկողության, վճարումների փաստաթղթային ձևակերպման և կառավարման, կանխիկի կառավարման և հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցելու համար կներգրավվի երրորդ անձ` ոչ պետական սուբյեկտ: Ֆինանսական գործակալը ՀՄՀ-Հայաստանի բանկային հաշվից (որին վճարվելու են ՀՄԿ-ի գումարները) վերավճարումները հաստատելու նպատակով ստորագրելու բացառիկ իրավասություն կունենա:

Համաշխարհային բանկի գնումային ուղենիշները` ՀՄԿ քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով դրանցում կատարված անհրաժեշտ փոփոխություններով հանդերձ, կօգտագործվեն Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման համար: ՀՄԿ-ն պարբերաբար կվենարայի և կհաստատի գնումային պլանները, ինչպես նաև իրականացված բոլոր գնումային միջոցառումների եռամսյակային հաշվետվությունները: ՀՄԿ-ի պահանջների կատարման առումով գնումային գործունեությունը եռամսյակը մեկ աուդիտի կենթարկվի նաև անկախ աուդիտորների կողմից:

V. Գնահատում

Ա. Տնտեսական վերլուծություն

Նախատեսվող ծրագրերը հիմնավորված ներդրումային ծրագրեր են, որոնք թույլ կտան նվազեցնել տնտեսական աճի խոչընդոտները և կրճատել աղքատությունը Հայաստանի գյուղական շրջաններում: Տնտեսական արդյունավետությունը հաշվարկվել է

Ենթակառուցվածքային յուրաքանչյուր ներդրման և տեխնիկական աջակցության յուրաքանչյուր միջոցառման համար՝ նպատակ ունենալով ընտրել առավելագույն արդյունավետություն ապահովող ծրագրերը: Արդյունքները, որոնք մոդելավորվել են Հայաստանի Հանրապետության Կառավարության գործառնական թիմի կողմից և վերանայվել ՀՄԿ-ի կողմից, յուրաքանչյուր կոնկրետ գործունեության արդյունքում սպասվող՝ եկամուտի աճողական ավելացման ակնկալիքի քանակական ցուցանիշներ են: Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի դեպքում հաշվարկվել են տրանսպորտային ծախսերի տնտեսումները: Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրի դեպքում սահմանված քանակական օգուտները ներառում են նոր ոռոգվող հողից ստացվելիք լրացուցիչ եկամուտները, բարձրարժեք բերքարտադրության ծավալների ավելացումը, բերքատվության ավելացումը, արտադրական ծախսերի նվազեցումը և ջրի ու էլեկտրաէներգիայի խնայողությունները: Միջոցառումներից յուրաքանչյուրի տնտեսական արդյունավետությունը համեմատվել է բազային 12.5% պայմանական ցուցանիշի հետ, որը համարժեք է վերջին երեք տարիների իրական աճի միջին տեմպին: Հաշվարկվել է, որ Համաձայնագրի ընդհանուր տնտեսական արդյունավետությունը **25%** է:

Սցենար	Տվյալ սցենարի հիմնական ենթադրությունները	Ծրագրի տնտեսական արդյունավետությունը	Հայաստանի համաձայնագրի տնտեսական արդյունավետությունը
Բազային սցենար	Երթևեկության ծավալի և ծախսերի բազային ենթադրություններ	Ճանապարհներ – 26%	25%
	Օգուտների և ծախսերի բազային ենթադրություններ	Ոռոգում - 25%	
Ցածր արդյունավետության 1-ին սցենար	Ծախսերի ավելացում 30%-ով	Ճանապարհներ – 21%	20%
		Ոռոգում - 20%	
Ցածր արդյունավետության 2-րդ սցենար	Երթևեկության ծավալը կազմում է ներկա հաշվարկային ցուցանիշի ընդամենը 50%-ը	Ճանապարհներ – 18%	18%
	Օգուտների ստացումը ուշանում է երկու տարով	Ոռոգում - 18%	

Բ. Խորհրդակցային գործընթաց

Հայաստանի Հանրապետության Կառավարությունն իր ծրագրային առաջարկը մշակել է Խորհրդակցային գործընթացի արդյունքում, որը նախաձեռնվել է **2003** թվականին Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) մշակման նպատակով: ՀՄԿ-ի ֆինանսավորման համար դիմելու հնարավորության շնորհիվ

հնարավոր եղավ լրացուցիչ քննարկել և տարածել ԱՀՌԾ-ն էլեկտրոնային ու տպագիր լրատվամիջոցներով: Գերակայությունների սահմանման նախնական փուլում Հայաստանի Հանրապետության Կառավարությունն ապահովեց քաղաքացիական հասարակության, ներառյալ՝ գյուղական համայնքների անդամների, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի լայն մասնակցությունը, այդ նպատակով կազմակերպելով հանրային հանդիպումներ և պարբերական կլոր սեղաններ՝ նվիրված հատուկ ՀՄՀ առաջարկի մշակմանը: Հասարակական կազմակերպությունները լուրջ մասնակցություն են ունեցել առաջարկի մշակմանը և հիմնավորվածության ուսումնասիրությունների կատարմանը՝ իրենց թվից ընտրելով ներկայացուցիչների, որոնք մասնակցել են միջգերատեսչական հոգաբարձուների խորհրդի («Հոգաբարձուների խորհուրդ») նիստերին:

Բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ աշխատանքները կշարունակվեն ընթացիկ խորհրդակցային գործընթացով, որը կներառի հետադարձ կապի ստացման մեխանիզմներ, որոնք կապված կլինի շահառուներին, հատկապես ոռոգման, գյուղատնտեսության, գյուղական ճանապարհների, քաղաքականության մշակման ու շահապաշտպանության մեջ մասնակիցներին, ինչպես նաև մոնիտորինգի ու գնահատման ոլորտում մասնագիտացող խմբերի: Ինտերնետային ռեսուրսների ու տեղեկատվության պորտալ ապահովելու նպատակով ՀՄՀ-Հայաստանը պահպանում է ինտերակտիվ ինտերնետային կայք, որը թարմ տեղեկություններ է պարունակում Ծրագրի մասին, ներառյալ բոլոր հանդիպումների արձանագրությունները, ֆորումի էջ, որտեղ կարելի է տեղադրել և բանավիճել առաջարկի մշակման ու իրագործման հետ կապված խնդիրներ, ինչպես նաև հարցումներ ու մտահոգություններ ուղարկելու նպատակով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցե:

Համաձայնագրի իրագործման մեջ շահառուների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով ՀՄՀ-Հայաստանի Կառավարման խորհրդի կազմում լինելու են քաղաքացիական հասարակության հինգ ներկայացուցիչներ՝ ձայնի իրավունքով: Նրանք նշանակվելու են Շահառուների կոմիտեի կողմից, որը բաղկացած կլինի ութից տասներկու անձանցից, որոնք կներկայացնեն ջրօգտագործողների միությունները, ֆերմերների խմբեր, ԱՀՌԾ-ի և ՀՄՀ-ի խորհրդակցական գործընթացներին մասնակցած ՀԿ-ներ և մարզային շահառուների կոմիտեները: Շահառուների կոմիտեն նաև Հոգաբարձուների խորհրդի նախագահի հետ կքննարկի իր տեսակետները և առաջարկությունները Ծրագրի կատարման և ընթացքի, ծրագրերի և ենթածրագրերի, Իրագործման պլանի բաղադրիչների, գնումների ու ֆինանսական կառավարման վերաբերյալ: Այս հանդիպումների և քննարկումների արձանագրությունները կտեղադրվեն ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում:

Գ. Կառավարության հանձնառությունը և արդյունավետությունը

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը դրսևորել է Ծրագրի իրագործման մեծ պատրաստակամություն և ՀՄՀ-ի ներդրումների արդյունավետությունն ապահովելու համար ձեռնարկելու է հետևյալ միջոցառումները.

- Օրենսդրությամբ այնպիսի քաղաքականության ամրագրում, որը կերաշխավորի ենթակառուցվածքային ներդրումների արդյունավետությունը, այդ թվում՝ օգտագործման վճարի վրա հիմնված՝ ծախսերի հատուցման մեխանիզմներ ոռոգման համակարգերի համար, ինչպես նաև կենսական նշանակության ճանապարհների պահպանության պարտականությունների պատվիրակում Հայաստանի ճանապարհային տնօրինությանը:
- Ջրամատակարարման գործակալության վերակառուցման պլանի մշակում և իրագործում, ինչպես նաև գործառնական ու պահպանության որոշ պարտականությունների փոխանցում ջրօգտագործողների միությունների ձևավորվող դաշնություններին:
- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի մնացած մասի վերականգնման համար ֆինանսավորման ներգրավում և համաֆինանսավորման տրամադրում՝ ի լրումն ՀՄԿ-ի ֆինանսավորմամբ վերականգնված ճանապարհների:
- Երրորդային ջրանցքների համար ՋՕՄ-երի համաֆինանսավորման պահանջների բավարարում՝ Համաշխարհային բանկի Ռոռգման զարգացման ընթացիկ ծրագրին համապատասխան:

Դ. Շարունակականություն

Ներկայում Հայաստանի Հանրապետության Կառավարությունը տարեկան ծախսում է մոտ **9** միլիոն ԱՄՆ դոլար ողջ ճանապարհային ցանցի ընթացիկ պահպանության վրա: Կենսական նշանակության ճանապարհային ցանցի վերականգնմանը զուգընթաց Հայաստանի Հանրապետության Կառավարությունը լրացուցիչ միջոցներ է հատկացնելու կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընթացիկ պահպանությունն ապագայում ֆինանսավորելու համար: Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիրը նույնպես կօգնի «ըստ կատարողականի» պայմանագրերի պրակտիկայի կայացմանը, որոնք **2005**թ. ներդրվել էին Հայաստանի ճանապարհային տնօրինության կողմից:

Հայաստանի ոռոգման ցանցի կառավարումը վերջերս ապակենտրոնացվել է **53** ՋՕՄ-երի, և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը բարձրացրել է ջրի կառավարման արդյունավետությունը՝ միավորելով ոռոգման ու դրենաժի պատասխանատվությունը: Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրին օգտակար կլինի «Ջուր դեպի շուկաներ» ընդգրկուն բաղադրիչը, որի շրջանակներում տեխնիկական ու կազմակերպչական օժանդակություն կցուցաբերվի՝ նպատակ ունենալով ապահովել ՋՕՄ-երի և վերջիններիս դաշնությունների մոտ այնպիսի համակարգերի առկայությունը, որոնք նրանց թույլ կտան արդյունավետորեն կառավարել և ֆինանսավորել իրենց գործունեությունը: Բացի այդ, վարկային կազմակերպությունների համար կիրականացվի վերապատրաստում և նրանց կտրամադրվի կապիտալ ՋՕՄ-երի անդամ ֆերմերների ու ձեռնարկությունների ֆինանսավորման հնարավորություններն ընդլայնելու նպատակով: Արդյունքում հնարավոր կլինի անցում դեպի անդամ ֆերմերների ավելի շահութաբեր գործունեություն, որի շնորհիվ կբարձրանա ոռոգման

համակարգի ֆինանսական կենսունակությունը, և միացային համակարգերը կփոխարինվեն էներգետիկ առումով ավելի արդյունավետ՝ ինքնահոս ոռոգմամբ, իսկ ՋՕՍ-երն ավելի մեծ կարողություն կունենան՝ ինքնաֆինանսավորվել անդամների հանգանակությունների հաշվին:

Ե. Բնապահպանական և սոցիալական ազդեցությունը

Հավանական չէ, որ Ծրագիրը լուրջ բնապահպանական, առողջական կամ անվտանգության վտանգներ կառաջացնի, և զգայուն տարածքների վրա չի ակնկալվում այնպիսի ազդեցություն, որը հնարավոր չլիներ մեղմել: Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիրը ՀՄԿ-ի ուղենիշների համաձայն դասակարգվում է որպես «Բ» կատեգորիայի ծրագիր, որը նշանակում է, որ պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական վերլուծությունների անցկացում՝ պարզելու կոնկրետ տարածքներին բնորոշ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության հանգամանքը: Ոռոգվող գյուղատնտեսության ծրագիրը դասվում է «Ա» կատեգորիայի ծրագրերի շարքը, որոնց համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական ազդեցության գնահատում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ջրամբարների, ինքնահոս համակարգերի և Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի կառուցման բացասական ազդեցության հնարավորությունը: Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի ծրագրի համար անհրաժեշտ կլինի ներկա իրավիճակի ուսումնասիրություն՝ նախքան շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական ազդեցության պահանջվող գնահատումների նախաձեռնումը, և հնարավոր է, որ որոշ ջրամբարների դեպքում պահանջվի հողի փոխհատուցման ծրագրի իրականացում: Բնապահպանական կառավարման պլաններ կմշակվեն նշված երկու ծրագրերի համար: Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրի արդյունքում ակնկալվող բնապահպանական օգուտներից կարելի է առանձնացնել արդյունավետության բարձրացման շնորհիվ ջրի կորուստների կրճատումը, էներգետիկ խնայողության բարելավումը և գյուղատնտեսական ավելի արդյունավետ գործելակերպի ներդրումը: Շրջակա միջավայրի նախնական գնահատումը վերանայելուց հետո Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարությունն ընդհանուր Ծրագրի համար տվել է դրական եզրակացություն, որը շրջակա միջավայրի վրա ազդեցության հետագա գնահատումների և ծրագրի նախագծման նախապայման էր:

Զ. Դոնորների համակարգումը

Ծրագիրը հենվում է մի քանի միջազգային դոնորների, հատկապես Համաշխարհային բանկի կողմից արդեն իրականացված զգալիաժավ աշխատանքի վրա, որի արդյունքում ստացվել են Ծրագրի հիմքում դրված հետազոտությունների մեծ մասը: Տրանսպորտի ոլորտում մինչ այսօր հիմնական դոնորներն են եղել Համաշխարհային բանկը և Լինսի հիմնադրամը: Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիրը փոխարացնում է ավելի մեծ ճանապարհների վերականգնման ու կառուցման աշխատանքները և նպաստում, որպեսզի այլ դոնորներ ապագայում գումարներ տրամադրեն կենսանական նշանակության ճանապարհային ողջ ցանցի կառուցման

համար: Ոռոգման ոլորտում մինչ այսօր հիմնական դոնորներն են եղել Համաշխարհային բանկը և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը («IFAD»): Դոնորների այլ նշանակալից ծրագրերից կարելի է հիշատակել ԱՄՆ Գյուղդեպարտամենտի Շուկայահանման աջակցության ծրագիրը («MAP»), ԱՄՆՄԶԳ-ի Միկրոձեռնարկությունների զարգացման ծրագիրը («MEDI») և ԱՄՆՄԶԳ-ի Հայաստանի Գյուղբիզնեսի փոքր և միջին ձեռնարկությունների շուկայի զարգացման ծրագիրը: Ոռոգման գյուղատնտեսության ծրագիրը սերտորեն գործակցելու է նշված դոնորների հետ և աշխատելու է նրանց կողմից արդեն իրականացված ծրագրերի ձեռքբերումների հիման վրա: